ՀԱՅՐԵՆԻ ՀԱՐԱՁԱՏ ՀՈՂԻ ՎՐԱ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ.— Շրջանում լայն աշխատանք է ծավալվել հայրենադարձ հայերի համար նոր բնակելի տներ կառուցելու ուղղությամբ։ Կոլխոզների ուժերով և պետությունից ստացած միջոցներով հայրենադարձները շրջանային կենտրոնում կառուցելու են շատ տներ։ Դրանցից մի մասը արդեն կառուցված ու շահագործման է հանձնված։

Իրենց համար բնակելի տներ են կառուցում նաև շրջանի գյուղերում բնակություն հաստատած սովետական նոր քաղաքացիները։

***

ԿԻՐՈՎԱԿԱՆ.— Արտասահմանից հայրենիք վերադարձած հայերի համար բնակարանային ու կենցաղային նորմալ պայմաններ ստեղծելու ուղղությամբ զգալի աշխատանք է կատարված քաղաքում։

Կարճ ժամանակամիջոցում բնակարանային շինարարության վրա ծախսվել է զգալի գումար։ Շատ ընտանիքներ բնակարան կառուցելու համար ստացել են հողամաս և 30-հազարական ռուբլու վարկ։ Շատերը արդեն ապրում են իրենց սեփական լուսավոր ու գեղեցիկ բնակարաններում, իսկ մյուսները շուտով կավարտեն փրենց նոր տների կառուցումը։ Բացի այդ, շատ հայրենադարձներ նոր բնակարաններ են ստացել հիմնարկ-ձեռնարկություններին պատկանող բնակելի շենքերում։

ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Նորքում և նրա շրջակայքում ապրում են մեծ թվով հայրենադարձ հայեր։ Հայրենադարձների թաղամասում այս տարի կառուցվելու են տարրական դպրոցի, կինո-թատրոնի, բուժարանի, մանկապարտեզի շենքեր, ֆիզկուլտ-խաղերի հրապարակ, ընդարձակվելու է շրմուղի ցանցը, տնկվելու են պտղատու և դեկորատիվ ծառեր։

Այժմ փորվում են այդ շենքերի հիմքերը, շինարարությունների վայրն է տեղափոխվում շինանյութ։

***

Ընթացիկ տարում մեծ միջոցներ են հատկացվում Երևանի, հայրենադարձներով բնակեցված, նոր ավանների բարեկարգման համար։

Ավելի քան մեկ միլիոն ռուբլի բաց է թողնված ավանների էլեկտրիֆիկացման համար։ Նախատեսված է մինչև նոյեմբեր ամիսը էլեկտրահաղորդման գծերը հասցնել ավանները։ Ավանների աշխատավորները մեծ եռանդով ձեռնամուխ են եղել էլեկտրիֆիկացման նախապատրաստական աշխատանքներին։

***

Արտասահմանից իրենց հայրենիքը՝ Սովետական Հայաստան վերադարձած հազարավոր հայրենադարձներ ներկայումս հրնարավորություն ունեն սիստեմատիկ կրթություն ստանալու։ Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրությունը այդ նպատակով նրանց համար ստեղծել է բոլոր անհրաժեշտ պայմանները։

Ներկայումս միջնակարգ մասսայական դպրոցներում սովորում են հազարավոր հայրենադարձ երեխաներ. մոտ 1000 պատանի ու աղջիկ էլ սովորում են բանվորական ու գյուղական երիտասարդության դպրոցնե-

ում և արհեստագործական ուսումնարաններում։ Կազմակերպված են անգրագիտության վերացման 17 և կիսագրագիտության վերացման 56 խմբակներ, որոնց մեջ ընդգրկված են ավելի քան 1000 սովորողներ։ Հայրենադարձ երեխաների համար միայն Երևանի դպրոցներում կազմակերպված է 42 դասարան, իսկ Նոր Զեյթուն և Նոր Բութանիա ավաններում բացված են նոր դպրոցներ, որտեղ հարյուրավոր երեխաներ են սովորում։

Ռեսպուբլիկայի ուսուցիչները մեծ սիրով են զբաղվում հայրենադարձ երեխաների դաստիարակության և ուսուցման գործով։ Նրանք ոչ միայն դպրոցներում, այլ և դպրոցից դուրս անհատական կարգով պարապում են երեխաների հետ։ 270 ուսուցիչներ անհատական կարգով պարապում են ավելի քան 890 երեխաների հետ։

Ռեսպուբլիկայում աշխատում են արտասահմանից հայրենիք վերադարձած ավելի քան 145 ուսուցիչ, որոնց սիստեմատիկ կերպով մեթոդական օժանդակություն է ցույց տրվում։

***

ԲԵՐԻԱ.— 1948 թվի ընթացքում շրջանի բազմազավակ ու միայնակ մայրերին տրված է 144 հազար ռուբլու նպաստ։

Հայրենադարձ 54 մայրեր ստացել են 32 հազար ռուբլու միանվագ նպաստ։ Այժմ շրջանում նպաստ է վճարվում 978 բազմազավակ մայրերի, որոնցից 137-ը հայրենադարձներ են։

Շրջանի բազմազավակ մայրերից երկուսը պարգևատրվել են «Հերոսուհի մայր» շքանշանով, 143-ը «Մայրության մեդալ» մեդալով։ Պարգևատրվածներից 55-ը հայրենադարձներ են։

Շրջանում այժմ գործում են 5 մանկամսուր, 11 մանկապարտեզ, 5 մանկաբարձական կետ, մանկական կոնսուլտացիաներ, կաթնախոհանոց։

ԶԵՅԹՈՒՆ ԱՎԱՆՈՒՄ

Զեյթուն ավանում, որտեղ մեծ մասամբ ապրում են հայրենադարձ հայեր, կառուցվում են պոլիկլինիկայի և ակումբ-գրադարանի շենքեր։ Շինարարության համար հատկացված է 750 հազար ռուբլի։

Այժմ կատարվում են այդ շենքերի հիմքերի փորման աշխատանքները։

Կատարվում է նաև ծառատնկում. տնկվելու է մոտ երեսուն հազար ծառ։

Ավանում կազմակերպվել է մանկամսուր։